ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «9» հոկտեմբերի 2025թ.
(կնքման վայրը)

«31» հունվարի 2020 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման թիվ ԿՊ0125 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս ժամանակավոր կառավարիչ Ռ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Վարչապետի աշխատակազմ (ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին) (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի** 6-րդ հավելվածին կից ցանկում («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ սպառողներ Վարչապետի աշխատակազմ (ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին) ստորաբաժանումներ)) ավելացնել ստորև նշված բաժանորդական քարտը.

h/h	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	217072005	0636460	ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ (ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ)	Երևանի ԷՄԴ «Կենտրոն» տարածք

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2025 թվականի օգոստոսի 1-ից, **Կողմերի** միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Սույն համաձայնագիրը հանդիսանում է **Պայմանագրի** անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր **Կողմի** համար:

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 127

Ժամանակավոր կառավարիչ՝

Ռ. Պետրոսյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Սպառող՝
ՀՀ Վարչապետի աշխատակազմ
(ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին)

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ռոստոմի 30, շինություն 243

Գործերի կառավարիչ՝

Գ. Բոշյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.